| | | |
|---|---|---|
| 2 | <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ | 4 |
| 3 | <<Էսգեթ Ֆարմա>> ՍՊԸ | 6 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *3.Հարցում կատարելու մասին*

(*Մ.Օսիկյան*)

ԿԵԱՊ-ԾՀԱՊՁԲ-17-15/16-2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

### *4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին*

(*Մ.Օսիկյան*)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմմնավորրոող սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

### *5. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին*

(*Մ.Օսիկյան*)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտեր չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

### *6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

(*Մ.Օսիկյան*)

ԿԵԱՊ-ԾՀԱՊՁԲ-17-15/16-2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում՝ հասցե ք. Երևան, Ներսիսյան 7/1, տնօրենի ընդունարան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:***

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Օսիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Հայրապետյան,
Կ.Խեդոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան: